



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՀՀ ՔՆԱԴԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ Ժ/Պ

Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

«26» 04 2018թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 47

Ձեռնարկողը՝

<<ՍՈԼԱՐՄԻՍ>> ՍՊԸ

Ք. Երևան, Նոյ թաղամաս 119 տուն

Գործունեությունը՝

Գավառ համայնքի վարչական տարածքում <<Արգեստ>>
հողմային էլեկտրակայանի կառուցման և շահագործման
շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական
գնահատման հայտ

<< Գեղարքունիքի մարզ

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի
տնօրեն՝



Վ. Սահակյան



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՀՀ ՔՆԱԴԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ Ժ/Պ

Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

«26» 04 2018թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 47

Ձեռնարկողը՝

<<ՍՈԼԱՐՄԻՍ>> ՍՊԸ

Ք. Երևան, Նոյ թաղամաս 119 տուն

Գործունեությունը՝

Գավառ համայնքի վարչական տարածքում <<Արգեստ>>
հողմային էլեկտրակայանի կառուցման և շահագործման
շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական
գնահատման հայտ

<< Գեղարքունիքի մարզ

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի
տնօրեն՝



Վ. Սահակյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 47

<26> 04 2018թ.

**<< Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի վարչական տարածքում
<<Արգեստ>> հողմային էլեկտրակայանի կառուցման և շահագործման
շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական
գնահատման հայտ**

Ձեռնարկող՝

<<ՍՈԼԱՐՍԻՍ>> ՍՊԸ

Փաստաթղթի տեսակը՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության

նախնական գնահատման հայտ

/Գ կատեգորիա/

Տեղադրման վայրը՝

ք. Գավառ

<<ՍՈԼԱՐՍԻՍ>> ՍՊ ընկերության կողմից <<Արգեստ>> հողմակայանի կառուցման համար նախատեսվող տարածքը գտնվում է << Գեղարքունիքի մարզում, Գավառ քաղաքի բնակելի թաղամասի սահմանագծից 700 մ դեպի արևելք, իսկ Արծվաքար գյուղից մոտ 350 մ դեպի հյուսիս՝ Սևան-Մարտունի և Նորատուս-Գավառ ճանապարհների խաչմերուկից մոտ 1150 մ հեռավորության վրա: Հայցվող տարածքը հարթ հողամաս է, գտնվում է Գավառագետի բարձրադիր ափին:

Գործունեությունը իրականացնելու համար «ՍՈԼԱՐՍԻՍ» ընկերությունը << Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից ստացել է էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա (թիվ ԼԷN°0618 տրվ. 31.01 2018թ), որով սահմանված ընդհանուր դրվածքային հզորությունը 4 մՎտ է:

Գործունեության իրականացման համար տեղանքում առկա են անհրաժեշտ ելակետային պայմանները՝ սպասարկող ճանապարհներ, ենթակառուցյուններ և այլն: Հողմաէլեկտրակայանի կառուցման համար նախատեսված տարածքին բնորոշ է տափաստանային բուսածածկի տիպը, որտեղ բացակայում են ծառաթփուտային բուսականությունը: Տարածքը տեղակայված չէ հատուկ պահպանվող տարածքներում և/կամ անտառային տարածքներում, պատմամշակութային հուշարձանների սահմաններում կամ ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներում:

Կայանի կառուցման համար նախատեսվում է օգտագործել բարձր արդյունավետությամբ և բարձր որակի ուղղահայաց-առանցքային հողմային տուրբիններ (յուրաքանչյուրը՝ 1.3 մՎտ նոմինալ հզորությամբ): Տուրբինների արտադրական հզորությունը որոշվել է՝ հիմք ընդունելով << օդերևաբանության ծառայության կողմից տրված տվյալները: <<Արգեստ>> հողմաէլեկտրակայանի կառուցման համար նախատեսվող տարածքը գտնվում է 0- 6,0 մ/վրկ քամու արագության (50 մ բարձրության վրա) գոտում, որտեղ հողմային էներգիայի ուժգնությունը 0-200 Վտ/մ² է:

Ընտրվել է EDS-Group ընկերության արտադրանքը, որը համարվում է խոշորագույն արտադրողներից մեկը: Տուրբինի բոլոր սարքավորումներն ունեն Եվրոպական

ստանդարտներին բավարարող հավաստագրեր և բավարարում են տեղական բոլոր ստանդարտներին ու չափանիշներին: Այդ տուրբինների ընտրությունը թույլ է տալիս նվազեցնել հիմքային կրող կոնստրուկցիայի քանակությունը, փոքրացնել տեղադրվող մակերեսը, նվազեցնել լարանցման քանակը, աշխատանքները և այլն:

Հողմակայանի կառուցվածքները ներառում են՝

1. Հողմակայանային հանգույց
2. Տրանսֆորմատորային ենթակայան
3. Բարձրավոլտ օդային գիծ
4. Երկու պահակակետ
5. Ցանկապատ

Նախատեսվող 3 ուղղահայաց-առանցքային հողմային տուրբինների արտադրած փոփոխական հոսանքը՝ 0.4/35 տրանսֆորմատորի օգնությամբ վերածվելու է 35ԿՎ լարման և տեխնիկական պայմանների համաձայն՝ 600մ երկարությամբ բարձր լարման գծով փոխանցվելու է ցանցին:

Նախատեսվում է տեղադրել 1,30 ՄՎ անվանական հզորությամբ՝ 1300/62 տեսակի կամ նույնանման տեխնիկական ցուցանիշներով ժամանակակից հողմային տուրբին, որն արտադրվել է Գերմանական AN Wind Energie GmbH ընկերության կողմից:

Հողմային տուրբինը սկսում է աշխատել քամու 3,0 մ/վրկ նվազագույն աշխատանքային արագության դեպքում, քամու առավելագույն աշխատանքային արագությունը 25,0 մ/վրկ է:

Հողմային տուրբինը հագեցած է 3 ռոտորային թիակներով: Ռոտորի տրամագիծը 62,0 մ է, առավելագույն արագությունը՝ 19,0 պտ/րոպե: Տուրբինը հագեցած է գլանաձև ատամնավոր փոխանցման տուփով, որն աշխատում է 3 փուլով:

Նշված տեսակի տուրբինի համար նախատեսվում է օգտագործել մեկ գեներատոր, առավելագույն արագությունը 1.500,0 պտ/րոպե է, լարումը՝ 690,0 Վ, ցանցային հաճախականությունը՝ 50,0 Հց: Պաշտպանական բոլոր էլեկտրական սարքավորումները կբավարարեն տեղական և եվրոպական ստանդարտներին:

Կայանի տարածքում կառուցվելու է 6300ԿՎտ հզորության 0.4/35ԿՎ լարման ենթակայան, որից 35ԿՎ լարման օդային գծով հոսանքը կհաղորդվի դեպի «Կամո» 220/35/10 ԿՎ Ե/Կ-ի «Սարուխան» 35ԿՎ լարման օդային գիծ:

Աշտարակի կառուցման ժամանակ, արտադրող ընկերությունն օգտագործելու է խողովակավոր պողպատ, քանի որ AN Bonus աշտարակն էրոզիայից պաշտպանում է հենց ծածկված կաղապարը:

Կրող կոնստրուկցիան պետք է լինի ցինկապատ/գալվանացված, որը ամբողջությամբ ներկրվելու է Ռուսաստանից: Բարձրորակ գալվանացված կոնստրուկցիաների կարևորությունը կայանում է նրանում, որ ժամանակի ընթացքում չժանգոտվեն և հողանցման կորստի խնդիրներ չառաջանան: Հողանցման աշխատանքները կիրականացվեն հատուկ ներկրված պղնձյա, ալյումինե, ցինկապատ և չժանգոտվող մետաղի բաղադրիչ նյութերի օգնությամբ:

Հողմակները տեղադրելու համար աշտարակները ներկրվում են առանձնացված վիճակում: Հիմքերը պատրաստվում են 25 x 25 x 6 չափերով բետոնային խառնուրդի միջոցով, ինչը թույլ է տալիս աշտարակի առաջին աստիճանը տեղադրել անմիջապես հիմքի մեջ: Կրող կոնստրուկցիաների տեղադրումը սկսելուց առաջ պետք է կատարվեն հողային/հարթեցման աշխատանքներ:

Հողային աշխատանքները հիմնականում պայմանավորված են տուրբինների և ենթակայանի համար հիմքերի պատրաստմամբ, տևողությունը նախատեսվում է 0.5 – 1 ամիս: Կոնստրուկցիաների և տուրբինների տեղադրումը կկազմի մոտ 3 ամիս: Այդ

աշխատանքների համար նախատեսվում է օգտագործել մեկ էքսկավատոր և մեկ ինքնաթափ մեքենա, իսկ մոնիտաժային աշխատանքների ժամանակ կօգտագործվի ավտոկոռունկ:

Ընդամենը կառուցապատման մակերեսը կկազմի՝ 2033քմ, որից աշտարակների հիմքերի զբաղեցրած մակերեսը կազմում է՝ 1875 ք.մ. ենթակայանինը՝ 400 ք.մ, երկու պահակակետերինը՝ 50 ք.մ: Ցանկապատման համար նախատեսվում է 207 հատ սյուն, որի հիմքի չափերը ընդհանուր 8.3 ք.մ. է:

Աշխատանքները սկսելուց առաջ կհանվի վնասվող տարածքների բերրի հողաշերտը, որը ըստ նախնական հաշվարկների կկազմի՝ 447 մ³: Բերրի հողը կպահեստավորվի տարածքի հարավային մասում, կզբաղեցնի 180 ք.մ. մակերես:

Շինարարության փուլի համար կպահանջվի ջուր, որի ծավալը ըստ նախնական գնահատման՝ խմելու տնտեսական նպատակների համար կկազմի՝ 22 մ³, իսկ ջրցանի համար՝ 18մ³: Ջրցանի համար ջուրը բերվելու է ջրատար մեքենաներով, իսկ խմելու ջուրը՝ տարաներով: Հողմակայանի շահագործման ժամանակ ջրօգտագործում չի պահանջվում:

Հողմակայանի շինարարական աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները պայմանավորված են հողային աշխատանքների ընթացքում փոշու առաջացմամբ, շինարարական տեխնիկայի շահագործման արդյուքում աղմուկի մակարդակի ավելացմամբ, տրանսպորտային միջոցների շահագործման ժամանակ վառելիքի այրման արդյունքում արտանետումների առաջացմամբ:

Հողմակայանի շահագործման ընթացքում շրջակա տարածքների վրա հնարավոր ազդեցությունները կարող են արտահայտվել աղմուկով և թրթռումով (վիբրացիա): Թվարկված ազդեցությունները նվազեցնելու և փոխհատուցելու նպատակով նախնական գնահատման հայտում ներկայացվել են բնապահպանական միջոցառումներ՝ ըստ ազդեցության տեսակների:

Հողածածկի պահպանության համար նախատեսվում է

- Հնարավորինս նվազեցնել հողի արտաքին շերտի վնասումը և հեռացումը
- Հանված հողի արտաքին շերտը պահեստավորել հատուկ վայրում՝ բացառելով մակերևութային ջրերի հետ հողի շփումը
- Աշխատանքների ավարտից հետո վերականգնել և բարելավել տարածքները՝ հանված գրունտով և բերրի հողով:

Ըստ նախնական գնահատման շինարարության ընթացքում կառաջանա 8 – 10 մ³ շինադթ, որը նախատեսվում է տեղափոխել Գավառի քաղաքապետարանի կողմից հատկացված վայր:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- բեռնատար փոխադրամիջոցների երթևեկության կանոնակարգում՝ աշխատանքներն իրականացնելով ցերեկային ժամերին
- ցածր ձայնային մեխանիկական սարքավորումներ օգտագործում:

Նախատեսվել են նաև միջոցառումներ աշխատանքային անվտանգության ապահովման համար՝ աշխատողների և շրջակա բնակչության առողջության և անվտանգության համար:

Շրջակա տարածքներ տրանսֆորմատորային յուղերի հնարավոր արտահոսքերը բացառելու և կանխելու համար ենթակայանում նախատեսվում է տեղադրել յուղի արտահոսքի հավաքման համակարգ:

Համաձայն հայտի տեղեկատվության և դաշտային այցելությունների արդյունքների հողմաէլեկտրակայանի համար նախատեսվող տարածքում, կամ մերձակա տարածքներում ՀՀ կարմիր գրքում, կամ ԲՊՄՄ կարմիր ցուցակում գրանցված բուսատեսակները բացակայում են, իսկ կենդանիների միգրացիոն ուղիներ և գոտիներ գործունեության ենթակա տարածքներում չեն հայտնաբերվել:



Շահագործման փուլում շրջակա միջավայրի վրա ազդեցության չափը գնահատելու և վերահսկելու նպատակով շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է կազմակերպել՝ օդային ավազանի, հողածածկի, ջրահոսքերի, մակարդակի վիզուալ ստուգումներ և աղմուկի մակարդակի պարբերաբար չափում /ամիսը մեկ անգամ/: Նշված միջոցառումների համար նախատեսվել են ծախսեր:

Հողմաէներգետիկան բնապահպանական տեսանկյունից համարվելով էլեկտրական էներգիայի արտադրության նպաստավոր ուղղություն, թույլ է տալիս նվազեցնել հանածո վառելիքի օգտագործումը և կանխարգելել մթնոլորտային օդի և շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները: <<Արգեստ>> հողմակայանի համար եվրոպական ստանդարտներին համապատասխան ժամանակակից տուրբինների ընտրությունը ևս կարող է նպաստել շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունների կանխարգելմանը և նվազեցմանը:

Փորձաքննական պահանջներ

1. Տրանսֆորմատորային յուղով շրջակա տարածքներն աղտոտումից կանխելու նպատակով, անհրաժեշտ է տրանսֆորմատորները կահավորել յուղահավաք համակարգով, իսկ բանեցված յուղերը հեռացնել սահմանված կարգով:

2. Զրոգտագործումը, շահագործման ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների տեղադրումը և հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<ՍՈՒԱՐՍԻՍ>> ՍՊԸ ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի վարչական տարածքում <<Արգեստ>> հողմային էլեկտրակայանի կառուցման և շահագործման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխավոր մասնագետ՝



Հ. Մկրտչյան